ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 71-Լ

«24» 08 2023 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պետրոս Վարդանի Մարտիրոսյանին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի պաշտոնից ազատելու և Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի պարտականությունների կատարումը Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի տեղակալ Հայկ Մասիսի Խաչատրյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 2023 թվականի օգոստոսի 22-ի թիվ 382-Ա և 382[1]-Ա հրամանները, այն, որ անհրաժեշտ է կատարել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, և ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Պետրոս Վարդանի Մարտիրոսյանի կողմից՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Հայկ Մասիսի Խաչատրյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Գրիգորյան Լիլիթ - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Հանձնախմբի անդամներ՝

Քոչարյան Լիանա -	Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ,
Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Նազարեթյան Արմինե -	ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Մանուկյան Լիաննա -	ՀՀ դատախազության առաջին բաժնի պետ,
Խաչատրյան Նարինե -	Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը մինչև 2023 թվականի սեպտեմբերի 8-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ